8 յախնացքն. շաբաթն աւրն Համլիկանն, կիրակէին՝ Մամքանաւ Ով խա-
փանէ զվերոգրե-

9 ալ նզովս առցէ, որ կատարէ՝ աւրհնի յԱ.։

Մեկնություն.— 1. Համլիկը մի այլ արձանագրություն էլ ունի հայոց ՈՁԸ(=1239) թվին պատկանող Դսեղի ս. Գրիգորի աե պատին, որից պարզվում է, որ նա Մարծպանի (արձ. № 50) եղբոր որդին է, հետևապես Սարգիսը Սմբատի և Մարծպանի հայրն է։

Նկ. 46. Արձ. № 52։

2. Եռանդամբ բառը Եռանդի (մի գյուղի պատկանող բոլոր հողերը) գործիական հոլովն է, հետևապես արձանագրության այդ մասը պետք է թարգմանել այսպես՝

«Կկուաշեն գյուղն իր բոլոր հողերով մեծ հույսով տվի Աստվածածին եկեղեցուն»։

3. Լմն հող, կավի մի տեսակն է, որ կոչվել է նաև հայկավ և կավ իմաստասիրաց — հրակայուն կավ է և գործ է ածվել մետաղները ձուլելու և հրակայուն ամանների բերանը ծեփելու համար։ Լմն հողը կոչվել է նաև Լեմնակաւ և Կիլերմանի։ (Տես մեր — «Ալքիմիան պատմական Հայաստանում», Երևան, 1940, էջ 138։

Նշանակում է, Համլիկը Սանահնի վանքին է նվիրել Կարմիր քարի հրակայուն կավի հանքը։ Արդյոք սա այժմյան Թումանյանի հրակայուն կավի հանքը չէ։

4. 8-րդ տողում յախնացքն կարելի է կարդալ նաև այլ կերպ՝ յախնայքն և այլն, բայց իմաստը մեզ անհասկանալի է, իսկ վերծանությունը կասկածելի։

Տարբերություններ.— 1. Գրիմ 3-րդ տողում Կկուաշեն կարդացել է Ջակուաշեն։

2. Եռանդամբ Գրիմ կարդացել է՝ Եռանդութեամբն։

3. Երրորդ տողի Լմն հող Ջալ կարդացել է՝ մին հող։

4. Արտ Ջալ կարդացել է՝ արդ։